ԱՐԵՒՄՏԱՀԱՅՈՑ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Մատենաշար 1

ՀԱՅԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Երևան 2010

9(47.925)
Հ-24

ՀԱՅԵՐԻ

ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

4364

մատենաշար

1

Խմբագիր՝ Հ. Ալվրցյան

Աշխատությունը նվիրված է Թուրքիայում բնակվող հայության ազգային, մարդկային, կրոնական, լեզվական, կրթամշակութային, սոցիալական իրավունքներին, որոնք քննարկվում են Թուրքիայի ներքին օրենսդրության և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգային իրավունքի դիտանկյունից:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....4

1. ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 5

2. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 12

3. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ 17

4. ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ.....28

ՆԱԽԱԲԱՆ

Հայերի զանգվածային ոչնչացումից 95 տարի անց Թուրքիայի սակավաթիվ հայ համայնքը շարունակում է վերապան վերաբերմունքի թիրախ մնալ, ինչը հիմնված է վերջիններիս ազգային, կրոնական, լեզվական, մշակութային առանձնահատկությունների վրա ու հիմնականում դրսևորվում է երկրի զանգվածային լրատվամիջոցների, պետական կառույցների և քաղաքական կազմակերպությունների միջոցով:

Փաստաթուղթն անդրադառնում է Թուրքիայի հայության տարբեր շերտերի, ներառյալ՝ տարբեր պատճառներով բռնի դավանափոխ եղած հայության ու նրանց հետնորդների խնդիրներին: Ընդհանուր տեղեկատվություն է զետեղված Թուրքիայում հայության վիճակագրության, սոցիալ-տնտեսական վիճակի, երկրի քաղաքական կյանքին մասնակցության և վերջիններիս նկատմամբ պետական մակարդակով իրականացվող խտրական քաղաքականության վերաբերյալ:

Համապարփակ ձևով ներկայացված են Թուրքիայի ներքին օրենսդրությամբ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

Փաստաթուղթն ընդգրկում է նաև փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական ասպեկտները՝ ՄԱԿ-ում, ԵԱՀԿ-ում, ԵՄ-ում և այլ միջազգային կառույցներում մարդու իրավունքների ոլորտում Թուրքիայի ստանձնած միջազգային պարտավորությունների համատեքստում, ինչպես նաև հայերի հանդեպ Թուրքիայի որդեգրած էթնիկ զտումների քաղաքականության համապատասխանության հարցը միջազգային իրավունքի նորմերին ու սկզբունքներին:

1. ՀԱՅԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

1.1. Համառոտ վիճակագրություն

Թուրքիայի հայության իրական թիվը գերազանցում է երկրի կառավարության կողմից ներկայացվող պաշտոնական տվյալները (1935թ.՝ 57.000, իսկ 1965թ.՝ 58.000)[1], որոնք արտացոլում են հայերի թվաքանակը՝ բացառապես հիմք ընդունելով վերջիններիս կրոնական փոքրամասնություն լինելը: Հայերի ճշգրիտ թվի որոշումը խրթին է, քանի որ 1915 թվականից ի վեր ջարդերից խուսափելու նպատակով բազմաթիվ հայ ընտանիքներ կրոնափոխ են եղել, բացի այդ՝ փոխվել են հազարավոր կրոնափոխ եղած հայ որբերի անունները:

Որոշ աղբյուրների համաձայն՝ Թուրքիայում հայերի թիվը հասնում է 60.000[2]-ի: 1990-ականների վերջին Թուրքիայի հայ կաթոլիկների թիվը տատանվում էր 2000-5000-ի միջև, իսկ հայ բողոքականների թիվը 500 էր[3]: ԱՄՆ Պետդեպարտամենտի 2001թ. տվյալներով Հայ Առաքելական եկեղեցու հետնորդների թիվը նշվել է 50.000[4]: Համաձայն Թուրքիայի հայկական եկեղեցական շրջանակներում կատավող գրանցումների՝ հայերի թիվը Թուրքիայում տատանվում է 60.000-80.000-ի միջև[5]: Ի լրումն վերոհիշյալի՝ 1997 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության տասնյակ հազարավոր քաղաքացիներ աշխատելու նպատակով մուտք են գործել Թուրքիա[6]:

Հայության զգալի մասը բնակվում է Ստամբուլում: Մեծ թվով հայեր կան Օսմանբեյում, Քուրթուլուշում, Թարաբիայում, Բաքըրքյոյում և Քադիքյոյում: Բացի ստամբուլաբնակներից՝ զգալի թվով հայեր են ապրում գավառներում

Ըստ բազմաթիվ ազգագրագետների հաշվարկների՝ Թուրքիայում իսլամացված հայերի թիվը հասնում է 30.000-40.000-ի: Ընդ որում՝ 1960-ական

---

[1] Committee for Monitoring Minority Rights: Minorities in Turkey. (Istanbul), 02.06.1996, *P.* 3

[2] Minority Rights Group International, A Quest for equality, minorities in Turkey, MRG, Dec 2007, Minority Rights Group International, State of the World's Minorities 2008, MRG Jan 2008. Minority Rights Group International's 2009 report "Forgotten or Assimilated? Minorities in the education system of Turkey".

[3] Avakian, Florence: Interview with Patriarch Mesrob II of Istanbul and Turkey (PART I) , In: Azg/Mirror-Spectator On-Line, 27.05.1999; Internet source.

[4] Department of State: Annual Report on International Religious Freedom 2001. December 2001, p. 382. Internet source: http://www.state.gov/gdrl/rls/irf//2001/.

[5] E. Baghdasaryan, editor of "Hetq", "The Armenian Community of Istanbul: Confronting New Challenges and old Realities", July 21, 2008.

[6] „Agos" (Internet edition of 17.07.2002). http://www.agos.com.tr/indexeng.html

թվականներին կրոնափոխ եղած հայերի մի մասը կրկին քրիստոնեություն է ընդունել ու փոխել անունները:

Սակայն Թուրքիայում երբեք մարդահամար չի անցկացվել, որը հաշվի առներ բնակչության ազգային կազմը, որովհետև այդ երկրի սահմանադրությամբ Թուրքիայի բոլոր քաղաքացիները թուրքեր են: Թուրքիայի հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստյանը 1980 թ. գավառահայությանը բաժանում է չորս խմբերի.

ա. Հայեր, որոնք գիտակցաբար և կամավոր կերպով են իսլամացել:

բ. Հայեր, որոնք երեք սերունդ առաջ իսլամացել են եւ քրդական աշիրեթական ձևերով ապրում են մեկուսի:

գ. Կամա թե ակամա իսլամացած հայեր:

դ. Բուն գավառահայերը, որ հակառակ բոլոր զգալի և անզգալի դժվարություններին՝ հայ են մնացել, և այսօր Ստամբուլի հայութեան մեծագույն մասը նրանցից է բաղկանում:

Հայության նշված խմբերը բնակվում են Արևմտյան և Հարավարևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Փոքր Հայքում և Թուրքիայի այլ շրջաններում: Ուսումնասիրողները այս հայերի համար նշում են տարբեր թվեր՝ 2-ից մինչև 10 միլիոն: 10 միլիոնը համարելով խիստ չափազանցված և չհիմնավորված թիվ՝ առավել տրամաբանված ու հիմնավորված պետք է համարել 2-2,5 միլիոնը:

Այդ տեսակետին է նաև հարցի լավագույն գիտակներից մեկը՝ Հրանտ Դինքը. Եթէ Թուրքիան Եւրոմիութեան անդամ դառնայ օր մը, չեմ սխալիր, եթէ հայութիւն առնուազն երկու միլիոն եւս շատնայ Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող իսլամ հայերու թիւով: Վերջին տարիներին թուրք մասնագետներն ու պատմաբանները, ի թիվս որոնց՝ նաև Հալաչօղլուն, հայերի թիվը մեկից մեկ և կես միլիոն են գնահատում, որը ակնհայտորեն նվազեցված է[7]:

Առանձին խումբ են կազմում իսլամացած համշենահայերը, որոնց մի մասը կրոնափոխ է եղել 17-րդ դարի սկզբերին, իսկ մի մասը՝ 18-րդ դարում ու մասամբ նաև՝ 20-րդ դարի սկզբերին: Ներկայում իսլամացած համշենցի հայերը բնակվում են Թուրքիայի՝ Սև ծովի ափամերձ շրջաններում: Տարբերակում են համշենցիների երեք խումբ.

[7] Պատրիարք Շնորհք արք. Գալուստյանի խոսքը տեսնել՝ Ակիֆ, Թեհրան, 1980, 18 դեկտեմբերի: *Թուրք մասնագետների տեսակետները տե՛ս* www.aktifhaber.com, *http://www.sagduyu.de/blog/?p=251* *www.tekkisilikgazete.com/content/view/1399/5/* *http://www.sagduyu.de/blog/?p=251* http://www.bing.com/search?q=canadaturk.ca+13.12.2007&src=IE-SearchBox&FORM=IE8SRC

1. Արևմտյան համշենցիներ, որոնք բնակվում են հիմնականում Ռիզեի, Տրապիզոնի, Գիրեսունի, Օրդուի և Սամսունի նահանգում, սունի մուսուլմաններ են և խոսում են թուրքերեն:

2. Արևելյան համշենցիներ, որոնք բնակվում են Արդվինի նահանգում, խոսում են Համշենի բարբառով (արևմտյան հետազոտողներն այն կոչում են հոմշեցմա) և սունի մուսուլմաններ են:

3. Հյուսիսային համշենցիներ, որոնք բնակվում են Հարավային Ռուսաստանում և Աբխազիայում, քրիստոնյա են և հայախոս[8]: 1915 թ. ցեղասպանության հետևանքով այս տարածքներ են գաղթել Օրդուից, Սամսունից, Տրապիզոնից և ափամերձ այլ շրջաններից:

Ըստ որոշ հետազոտությունների՝ ներկայում շուրջ 20-30 հազար հայերեն լեզվով խոսող և 100.000 - 200.000 թուրքերեն կամ քրդերեն լեզուներով խոսող մահմեդական համշենցի հայեր են բնակվում Թուրքիայում: Այլ հետազոտողներ նշում են տարբեր թվեր՝ մի քանի տասնյակ հազարից մինչև 1,5-2 միլիոն և նույնիսկ ավելի: Հավաստի են թվում ծագումով ռիզեցի համշենագետ, իսլամից քրիստոնեություն դարձ կատարած Ալիե Ալթի (Ալիս Կոստանյան) տվյալները: Նա հատուկ աշխատություն է նվիրել իսլամացած համշենահայության պատմությանը. նրա հաշվարկներով Թուրքիայում բնակվում է երեք միլիոն իսլամացած հայ, որից ավելի քան մեկ միլիոնը՝ համշենահայ[9]:

1.2. Խտրականություն Թուրքիայի հայերի հանդեպ

Թուրքիայում հայերը ենթարկվում են ընդգծված վերապահ վերաբերմունքի և տուժում են իրավական ու վարչական խտրական միջոցներից: Դրան նպաստում է նաև Թուրքիայի օրենսդրության և իրավական դաշտի անհստակությունը:

Հայերի իրավունքների շարունակական ոտնահարման թուրքական քաղաքականության փաստման աղբյուրներն են.

- ականատեսների վկայությունները,
- ոչ կառավարական կազմակերպությունների ուսումնասիրությունները,

[8] Hemshinli: The Forgotten Black Sea Armenians, Bert Vaux, Harvard University

[9] 100.000-200.000 թիվը նշվում է Julia Hakobyan, ArmeniaNow reporter, "A different Tradition: Hamshen Armenians struggle for identity and recognition", 02 March, 2007, աշխատության մեջ: Ալիե Ալթի տվյալները տե՛ս՝ Դիտակ, 2002, մարտ-ապրիլ, էջ 26:

- միջազգային փորձագիտական խմբերի և ինստիտուտների հետազոտությունները,
- տարբեր միջազգային կազմակերպությունների դիտարկումները,
- մամուլի հաղորդագրությունները:

Թուրքիայում հայկական կազմակերպությունների աշխատանքները խիստ սահմանափակված են կրոնական, սոցիալական և կրթական ոլորտներով՝ եկեղեցու հսկողության ներքո: Չի ճանաչվում հայերի՝ իբրև կրոնական փոքրամասնության, միություններ ունենալու իրավունքը: Հայկական կազմակերպությունների բացառապես կրոնական գործունեությունն անգամ սահմանափակվում է պետական մարմինների կողմից, ինչը հանգեցնում է հոգևորականների թվի կրճատման, եկեղեցու ունեցվածքի բռնագրավման, եկեղեցու՝ որոշում կայացնող մարմինների լուծարման ու պետության կողմից եկեղեցական ընտրություններին միջամտության:

1961թ. սահմանված կարգի համաձայն՝ Թուրքիայի հայոց պատրիարքն ընտրվում էր Թուրքիայի հայերի ընտրական քոլեջի կողմից, մինչդեռ 1980-ականներին ընտրություններին մասնակցելու իրավունք ստացան միայն պետականորեն գրանցված հայկական կազմակերպությունները, իսկ թեկնածուների ընտրությունը սահմանափակվեց թեկնածուի հոր՝ Թուրքիայի քաղաքացի լինելու հանգամանքով: Հայ պատրիարքի ընտրություններին պետական միջամտության փորձեր են արվել 1990 և 1998 թվականներին[10]:

Միջամտության զոհ են նաև հայկական դպրոցները՝ ուսուցիչների պատրաստման, հայերենով թույլատրվող շաբաթական դասաժամերի կամ դպրոցների աշխատանքի հետ կապված այլ հարցերի սահմանափակումներով: Թուրքիայի իշխանությունները կամայականորեն կարող են կասեցնել հայկական դպրոցների գործառույթները: Սահմանափակումներին զուգահեռ՝ հայկական դպրոցները, եկեղեցիներն ու գերեզմանատները պարբերաբար ենթարկվում են հարձակումների, իսկ բազմաթիվ հայկական պատմամշակութային հուշարձաններ ու կոթողներ ոչնչացվում կամ անուշադրության են մատնվում՝ Անատոլիայում հայերի ներկայության հետքերը ջնջելու դիտավորությամբ:

[10]Hrant Dink wrote: "We are sad ... The (Armenian) community is deeply hurt by the uncertainty created by the escalation of the senseless crisis about the election of an acting patriarch. These are trying days ... We are observing with shame" (see "*Uzgunuz*", *Agos*, 21 August 1998).

Թուրքիայում չեն հարգվում հայերի անհատական իրավունքներն ու ազատությունները, սահմանափակումներ են գործում խոսքի ազատության, քաղաքացիական ծառայության անցնելու, իրավաբանական մասնագիտություններ ընտրելու, զինվորական կարիերա անելու հարցերում: Հայերը մեծ դժվարությունների են հանդիպում անգամ իրենց երեխաներին որպես հայ գրանցելու խնդրում:

Հայերի նկատմամբ ատելության սերմանմանը նպաստում են երկրի զանգվածային լրատվամիջոցներն ու քաղաքական վերնախավը՝ հայերին մեղադրելով երկրի առջև ծառացած բոլոր խնդիրների մեջ: Թուրքիայում անցկացված հասարակական հարցումներից պարզվել է, որ երկրում առավելապես 'ատելի ազգ' են համարվում հայերը, իսկ թուրք երեխաների 73 տոկոսը կարծում է, որ հայերը 'վատ մարդիկ են'[11]: Բազմաթիվ ահազանգներ են արձանագրվում հայկական դպրոցներից ու կազմակերպություններից տարաբնույթ սպառնալիքների ստացման մասին: Վերջիններս տեղական իշխանություններին են դիմում սպառնալիքների հետաքննման ու պաշտպանության խնդրանքներով: Պոլսո Հայոց Պատրիարքը բազմիցս տարբեր հայկական կազմակերպությունների կամ անհատների պաշտպանության ապահովման խնդրագրեր է հղել Ստամբուլի քաղաքապետին, սակայն մերժում է ստացել այն պատճառաբանությամբ, թե քաղաքապետը չի կարող հոգալ անվտանգության համար անհրաժեշտ ծախսերը[12]:

Թուրքիայում բազմաթիվ իրավաբաններ, լրագրողներ և մարդու իրավունքների պաշտպաններ ենթարկվում են հալածանքների, սպառնալիքի, անարդար դատավարության, ինչպես նաև ֆիզիկական հարձակումների: Դատավարությունների հիմք է հանդիսանում Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածը, որը քրեականացնում է 'թուրքական ինքնության վիրավորումը': 2008թ. հունվարի 19-ին հայազգի լրագրող Հրանտ Դինքի սպանության հիմքում միևնույն փաստարկն էր: Հրանտ Դինքը նախկինում դատապարտվել էր 301-րդ հոդվածով: Միևնույն մեղադրանքով մեկամյա պայմանական ազատազրկման են դատապարտվել նաև Դինքի որդին և 'Ակօս' թերթի խմբագրի տեղակալ Սարգիս Սերոբյանը[13]:

[11] "Armenians in Turkey today", Dr. Tessa Hofmann, October 2002.
[12] Minority Rights Group International, "A Quest for equality, minorities in Turkey", MRG, Dec 2007, "State of the World's Minorities" 2008, MRG Jan 2008
[13] TURKEY - AMNESTY INTERNATIONAL REPORT 2008

Թուրքիայի օրենքների համաձայն՝ եկեղեցիներն ու դրանց կից գործող հիմնարկներն իրավաբանական անձ չեն համարվում: Իրավական սահմանափակումների արդյունքում այս հաստատությունների եկամուտը կարող է առաջանալ բացառապես անշարժ գույքի վաճառքից, վարձակալությունից կամ լիզինգից: Այս հաստատությունները կուտակում են գույքի վարձակալությունից ստացված եկամուտները՝ իրենց ծախսերը հոգալու, ինչպես նաև դպրոցների, հիվանդանոցների գործունեությանն աջակցելու նպատակով[14]: Թուրքիայում հայկական հիմնարկները, չունենալով սեփականություն ձեռք բերելու իրավունք, կարող են զրկվել իրենց իսկ ունեցած սեփականությունից. եթե համայնքը հոգևորականների կամ իր հետնորդների թվի նվազման պատճառով շուրջ տասը տարի չի օգտագործում իր սեփականությունը, ապա, համաձայն Թուրքիայի օրենքների, պետությունը ստանձնում է այդ սեփականության օգտագործման և տնօրինման իրավունքը[15]: Բացի այդ՝ փոքրամասնությունը կարող է տնօրինել միայն այն սեփականությունը, որը ներառվել է 1936թ. կառավարությանը ներկայացված ունեցվածքի ցուցակում[16]: Արդյունքում Ստամբուլի հայ համայնքին պատկանող ավելի քան չորս տասնյակ գույք անցել է պետությանը, իսկ ավելի քան ութ տասնյակ գույք դեռևս համարվում է վիճարկելի ու պարբերաբար վարույթների թիրախ է դառնում:

Գույքից զրկման վարույթները քննում է Անկարայի Վճռաբեկ դատարանը, որի 2001թ. դեկտեմբերին կայացրած որոշումը նախադեպ է հանդիսանում ոչ մահմեդականների գույքի առգրավման գործերում: Դատարանն ընդունել է, որ 1935 թ.-ի վեր Թուրքիայի փոքրամասնությունները չեն կարող գույք ձեռք բերել կամ գույք ստանալ նվիրատվությունների կամ ժառանգման միջոցով, քանի որ իրավական ժառանգորդի բացակայության ժամանակ գույքն անցնում է պետությանը:

1.3. Իսլամացված ու ծպտյալ հայեր

Թուրքիայի կրոնափոխ եղած հայությունը բազմաշերտ է. նրանց մեջ կան ծպտյալ քրիստոնյա հայեր, իսկ իսլամացած հայերի մի հատվածն

[14] "Armenians in Turkey today", Dr. Tessa Hofmann, October 2002.

[15] Annual Report in International Religious Freedom 2001, op. cit., P. 383, European "Progress Report" on Turkey, published by the European Commission on 13 November (2001).

[16] Հիմնարկների մասին՝ Թուրքիայի օրենքը /1926 և 1936թթ./ հիմնարկներին արգելում է 1936 թվականից ի վեր սեփականություն ձեռք բերել:

առանձնահատուկ է կարևորում իր հայկական արմատները, մյուս մասն էլ անտեսում է այն՝ բնակչության մեծամասնության արհամարանքին չարժանանալու մտավախությամբ:

Չափազանց ծանր է Թուրքիայի իսլամացված հայության վիճակը. վերջիններս ոչ միայն ենթարկվում են ինստիտուցիոնալ սահմանափակումների, այլև՝ սոցիալական խտրականության: Կրոնափոխ եղած հայերն իրենք խոստովանում են, որ կրոնով նախատեսվող բոլոր արարողություններն անցնելուց հետո անգամ մահմեդականներն իրենց չեն համարում իրական մուսուլմաններ, իսկ 'կրոնափոխ կամ գյավուր' որակումներն իրենց ուղեկցում են ողջ կյանքի ընթացքում: Տեղի թուրքերը իսլամացված հայերին կնության չեն տալիս իրենց աղջիկներին, իսկ տեղական իշխանությունները նրանց չեն ապահովում անհրաժեշտ աշխատանքով: Տարեցտարի ավելանում են վանդալիզմի դեպքերը իսլամացված հայության պատմամշակութային հուշարձանների նկատմամբ[17]:

Ծպտյալ քրիստոնյա հայերի խնդիրները հիմնականում կապված են կրոնն ազատորեն դավանելու ու ազգային ավանդույթներն անարգել շարունակելու հետ: Վերջիններս չեն կարողանում օգտագործել հայկական եկեղեցիները, որոնք ավերակների են վերածվել: Ամուսնության և կնունքների համար ստիպված մեկնում են Ստամբուլ, քանի որ նրանց բնակության վայրերում 1915թ. ի վեր երբևէ քահանա չի այցելել: Ի տարբերություն մուսուլմանների՝ պետությունը չի գրանցում ծպտյալ հայերի գերեզմանները:

Իսլամացված հայության ու ծպտյալ հայերի խնդիրներն առավել բարդանում են Թուրքիայի հայության տարբեր շերտերի փոխադարձ ճանաչման խնդրով, մասնավորապես պոլսահայ համայնքի՝ վերջիններիս հանդեպ ցուցաբերվող վերապահ վերաբերմունքի ու նրանց 'ուրիշ կամ օտար' ընկալելու առումով: Իսկ Պոլսո Հայոց Պատրիարքարանի վերապահ վերաբերմունքը կրոնադարձվող՝ քրիստոնեություն վերընդունող հայության հանդեպ բացատրվում է զգուշավորության, պետական սահմանափակումներից, տարաբնույթ շահարկումներից խուսափելու հարցերով: Հետևաբար Թուրքիայի ծպտյալ ու իսլամացված հայության ու նրանց հետնորդների ճիշտ ընկալման հարցում կարևոր դեր ու անելիքներ կարող է ունենալ Հայ Առաքելական եկեղեցին:

[17] Amberin Zaman , Turkish-language *Taraf* (July 10, 2008).

2. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ

Թուրքիայի կառավարության քաղաքականությունը փոքրամասնություններին առնչվող հարցերում հիմնված է 1923թ. Լոզանի պայմանագրի վրա հոդվածներ (37-45), համաձայն որի՝ 'Ոչ մահմեդական փոքրամասնություններին պատկանող Թուրքիայի քաղաքացիների համար օրենքով երաշխավորվում են միևնույն վերաբերմունքն ու անվտանգությունը, որը նախատեսված է Թուրքիայի այլ քաղաքացիների համար: Մասնավորապես, նրանք պետք է հավասար իրավունքներ ունենան իրենց ծախսերով բացելու, օգտագործելու և վերահսկելու բարեգործական, կրոնական, սոցիալական կազմակերպություններ, դպրոցներ, կրթական և այլ հաստատություններ՝ դրանցում ազգային լեզուն կիրառելու ու կրոնն ազատորեն դավանելու իրավունքներով':

Թուրքիայում խիստ սահմանափակված է 'փոքրամասնություն' հասկացությունը, ինչը մեկնաբանվում է իբրև Լոզանի պայմանագրով ճանաչված բացառապես ոչ-մահմեդական փոքրամասնություններ: Թուրքիայի կառավարությունը չի ընդունում երկրում ազգային, էթնիկ, լեզվային կամ այլ տարբերությունների վրա հիմնված փոքրամասնությունների առկայությունը[18]:

Թուրքիայի Սահմանադրությունում փոքրամասնություններին հղումներ չկան: Սահմանադրության համապատասխան դրույթներն են՝ 10-րդ հոդվածը, որը բոլորի համար երաշխավորում է հավասարություն օրենքի առջև՝ առաց խտրականության, 24-րդ ու 42-րդ հոդվածները, որոնք երաշխավորում են բոլորի կրթական իրավունքները:

Թուրքիայում չկան օրենքներ փոքրամասնությունների հատուկ իրավունքների պաշտպանության և խտրականությունից վերջիններին զերծ պահելու մասին, սակայն գործում են մի շարք օրենքներ, որոնցում բոլորի համար ամրագրված է հավասարության սկզբունքը, մասնավորապես Քաղաքացիական օրենսգիրքը (հոդված 8-ը՝ անձի՝ իբրև

[18] UN Human Rights Instruments, HRI/CORE/TUR/2007, 8 July 2008, p. 36

իրավունքների սուբյեկտի, հավասարության սկզբունքը), Սոցիալական ծառայությունների և երեխաների պաշտպանության մասին օրենքը (հոդված 4-ը՝ խտրականության արգելում սոցիալական նպաստների համար սահմանված պահանջներին համապատասխանության որոշման ընթացակարգում), Քաղաքական կուսակցությունների մասին օրենքը (հոդված 82-ը՝ ռասիզմի արգելում, հոդված 83-ը՝ հավասարության սկզբունքի պահպանում), Ազգային կրթության մասին հիմնարար օրենքը (հոդված 4-ը՝ կրթության բնագավառում հավասարության իրավունք, հոդված 8-ը՝ սեռերի միջև հավասարություն), Աշխատանքի մասին օրենքը (հոդված 5-ը՝ հավասար վերաբերմունք, խտրականության արգելում), Հաշմանդամների մասին օրենքը (հոդված 4-ը՝ հաշմանդամների նկատմամբ խտրականության արգելում): Թուրքիայի Քրեական օրենսգրքի 122-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է սահմանում լեզվական, ռասայական, սեռային, կրոնական կամ այլ հիմունքներով տնտեսական խտրականության համար, իսկ 216-րդ հոդվածը բնակչության շրջանում ատելություն և թշնամանք տարածելու համար սահմանում է քրեական սանկցիաներ: Լեզվական, կրոնական, ռասայական և այլ տարբերությունները նվաստացնող ու դրանց վրա հիմնված ատելության տարածումն արգելվում է Ռադիո և հեռուստատեսային հիմնարկների ստեղծման և գործունեության մասին օրենքի 4-րդ հոդվածով: Ներկայումս աշխատանքներ են տարվում Քրեական օրենսգրքի 'թուրքական ինքնությունը վիրավորելու համար' քրեական պատիժ սահմանող 301-րդ հոդվածը փոխելու ուղղությամբ:

Համաձայն 1923թ. Լոզանի պայմանագրի դրույթների՝ փոքրամասնությունների եկեղեցիները, վանքերն ու դպրոցները ղեկավարվում են առանձին կառավարական մարմնի՝ Հիմնարկների գրասենյակի կողմից, որը հաստատում է կրոնական հաստատությունների, դպրոցների, բարեգործական հիմնարկների, այդ թվում՝ հիվանդանոցների գործունեության կարգը[19]: Թուրքիայի կառավարությունը կրոնական և կրթական հիմնարկները վերահսկում է Կրոնական գործերով Տնօրինության միջոցով:

Թեև 1991 թ. չեղյալ է հայտարարվել թուրքերենից բացի այլ լեզվով հրապարակումներն արգելող թիվ 2932 օրենքը, դեռևս գործում են մի շարք

[19] U.S. Department of State: Annual Report on International Religious Freedom for 1999: Turkey. Washington, DC, September 9, 1999.

օրենքներ, որոնք արգելում կամ սահմանափակում են որոշ լեզուների օգտագործումը[20]: 2002 թ. փոփոխված Օտար լեզուների դասավանդման և ուսուցման օրենքը հնարավորություն ընձեռեց Թուրքիայի քաղաքացիներին՝ սովորելու իրենց առօրյա կյանքում ավանդաբար կիրառող բարբառներն ու տարբեր լեզուները: Սակայն օրենքն ունի բավականին խստական դրույթներ, ըստ որոնց օտար լեզուներ կարող են սովորել միայն 18 տարին լրացած և հանրակրթական դպրոցները ավարտած քաղաքացիները, իսկ ուսուցման կուրսերը պետք է կազմակերպվեն երկրի ազգային կրթության նախարարության կողմից սահմանվելիք կանոնների համաձայն, ինչը ոչ միայն շատ ծախսատար է, այլև պահանջում է սահմանված որակավորում ունեցող ուսուցիչներ[21]: Համաձայն 2002 թ. օգոստոսի 3-ի թիվ 4771 օրենքով փոփոխված Ռադիո և հեռուստատեսային հիմնարկների ստեղծման և գործունեության մասին օրենքի դրույթների՝ ռադիո և հեռուստահաղորդումները կարող են հեռարձակվեն թուրքերենով կամ որոշ լեզուներով, որոնք նպաստում են համընդհանուր մշակույթի և գիտության զարգացմանը[22]: Սահմանափակումներ են գործում քաղաքական կուսակցությունների գործունեության մասով. Քաղաքական կուսակցությունների մասին օրենքի՝ փոքրամասնությունների ստեղծումը կանխարգելող 81-րդ հոդվածն արգելում է քաղաքական կուսակցություններին հայտարարել, որ Թուրքիայում կան փոքրամասնություններ՝ ազգային, կրոնական, հավատքի, լեզվականն կամ այլ տարբերություններով: Ընտրությունների և ընտրողների գրանցման հիմնական դրույթների մասին օրենքը (հոդված 58) արգելում է ռադիոյով, հեռուստատեսությամբ կամ այլ ձևերով ընտրական քարոզարշավը, թուրքերենից բացի, այլ լեզուներով:

Թուրքիայում ոչ մահմեդական փոքրամասնությունների պատկանող ավելի քան 200 հիմնարկները չունեն որևէ նպատակով սեփականություն ձեռք բերելու իրավունք և կարող են զրկվել իրենց ունեցած սեփականությունից, եթե շուրջ 10 տարի այդ սեփականությունը չի

[20] Violations of Free Expression in Turkey (New York: Human Rights Watch 1999) Chapter IX).

[21] Minority Rights Group International's 2009 report "Forgotten or Assimilated? Minorities in the education system of Turkey".

[22] UN Human Rights Instruments, HRI/CORE/TUR/2007, 8 July 2008, p. 35

"2000 Regular report from the Commission on Turkey's progress towards accession", 8 November 2000, p. 18.

11 World Directory of Minorities (London: Minority Rights Group International, 1997) p. 379.

օգտագործվել: Հիմնարկների մասին օրենքը (1926 և 1936թթ.), որը հիմնարկներին արգելում է 1936 թվականից ի վեր սեփականություն ձեռք բերել, 1974 թվականից ընտրովի կերպով կիրառվում է բացառապես ոչ մահմեդական հիմնարկների նկատմամբ: Թուրքիայում չկան փոքրամասնությունների հարցերով զբաղվող տարածքային կամ տեղական կառավարման մարմիններ: Շրջանների կառավարման մասին օրենքի 2-րդ հոդվածով խստականություն է սահմանված փոքրամասնությունների լեզվով անձնանունների և տեղանունների օգտագործման, ինչպես նաև վարչական ու դատական գործառույթներում փոքրամասնությունների լեզուների օգտագործման հարցերում:

2002 թ. օգոստոսին Եվրոպական միության անդամակցության ուղղությամբ իրականացվելիք բարեփոխումների շարքում Թուրքիայի խորհրդարանի հաստատած Բարեփոխումների ծրագիրը, որը ներառում էր քրիստոնիաներին պատկանող հիմնարկների համար գույքի ձեռքբերման սահմանափակման վերացում, ոչ գործնական ու խիստ խստական բնույթի էր, քանի որ.

- հիմնարկները Նախարարների խորհրդին պետք է ներկայացնեն գույքի նկատմամբ սեփականության անհրաժեշտության և տնտեսական հիմքի առկայության հիմնավորում, և Նախարարների խորհուրդը պետք է հաստատի սեփականության իրավունքի տրամադրումը,
- հիմնարկները չպետք է որևէ հարաբերություն հաստատեն օգնություն տրամադրող օտարերկրյա կազմակերպությունների հետ՝ առանց Թուրքիայի ներքին գործերի, արտաքին գործերի նախարարությունների և Նախարարների խորհրդի համաձայնության:

Բարեփոխումների փաթեթով հայերին և ոչ մահմեդական այլ փոքրամասնություններին թույլատրվում էր ռադիո կամ հեռուստածրագրեր հեռարձակել իրենց մայրենի լեզվով:

Թուրքիայի կառավարության կողմից փոքրամասնությունների խնդիրները ԵՄ-ի չափանիշներին համարժեք լուծելու նպատակով 2004 թ. հունվարին հիմնված Փոքրամասնությունների խնդիրները գնահատող կոլեգիայի կազմում ընդգրկված են երկրի արտաքին գործերի, ներքին

գործերի ու կրթության նախարարությունների ներկայացուցիչները, և չկան փոքրամասնությունների ներկայացուցիչներ:

2008 թ. փետրվարի 20-ին ընդունված հիմնարկների մասին նոր օրենքը թույլատրում է ոչ մահմեդական հիմնարկներին դիմել՝ 1970-ականների պետության կողմից առգրավված իրենց սեփականությունները վերականգնելու համար, եթե դրանք դեռևս գտնվում են պետության տնօրինության տակ՝ որևէ փոխհատուցում չնախատեսելով երրորդ կողմին վաճառված նախկին սեփականությունների դիմաց[23]:

Թեև որոշ փոփոխություններ արձանագրվեցին, իրականացվեցին նաև հետընթաց գործողություններ, մասնավորապես Թուրքիայի Ազգային կրթության նախարարությունը փոփոխեց դպրոցական ծրագիրը՝ փոքրամասնությունների, այդ թվում՝ հայերի հանդեպ իր վերապահ մոտեցումները կենսագործելու համար: 2007 թ. փետրվարի 8-ի՝ Հատուկ կրթական հաստատությունների մասին թիվ 5580 օրենքի համաձայն՝ 2008 թ. մարտի 8-ին Ազգային կրթության նախարարության կողմից ընդունված Մասնավոր կրթական հաստատությունների մասին թիվ 26810 հրահանգով սահմանվեցին օտար և փոքրամասնությունների նախակրթական, միջնակարգ և լիսե դպրոցների բացման ու գործունեության, այդ դպրոցներում պաշտոնավարման և դասավանդման ծրագրերի կազմման սկզբունքներն ու հիմքերը, որոնք բավականին խտրական բնույթի էին: Մասնավորապես՝ մասնավոր դպրոց բացելու իրավունքը վերապահված է նահանգապետարանին՝ Ազգային կրթության նախարարության հաստատմամբ: Դպրոցի տնօրենի և դասախոսական կազմի նշանակումը նույնպես կախված է նահանգապետարանի կամայականություններից: Մասնավոր դպրոցում աշխատող յուրաքանչյուր անձի համար պարտադիր պայման է թուրքերենի գերազանց իմացությունը, ինչը կարող է որոշվել քննության միջոցով: Ոչ թուրքերենով դասավանդվող դասերն ու դրանց հատկացվող դասաժամերը նույնպես որոշվում են նախարարության կողմից: Ընդ որում՝ մասնավոր դպրոցներում կրթություն կարող են ստանալ միայն փոքրամասնությանը պատկանող Թուրքիայի քաղաքացիություն ունեցող անձանց երեխաները:

[23] Minority Rights Group International's 2009 report "Forgotten or Assimilated? Minorities in the education system of Turkey".

3. ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ

1948 թ. ՄԱԿ-ի կողմից Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի ընդունմամբ սկիզբ դրվեց բազմաթիվ միջազգային փաստաթղթերի ընդունման գործընթացին, որոնք ներկայումս հանդիսանում են մարդու իրավունքներին առնչվող միջազգային սկզբունքների ու նորմերի հիմք[24]:

Թուրքիան մարդու իրավունքների բնագավառում անդամակցում է բազմաթիվ միջազգային փաստաթղթերի, որոնք թեև ուղղակիորեն չեն ամրագրում փոքրամասնությունների առանձնահատուկ իրավունքները, սակայն ապահովում են հավասար իրավունքներ բոլորի համար: Այդուհանդերձ, անհրաժեշտ է նշել, որ այդ միջազգային փաստաթղթերի զգալի մասը, որոնք ինչ-որ կերպ առնչվում են փոքրամասնություններին ու նրանց իրավունքների, Թուրքիայի կողմից ստորագրվել են հատուկ վերապահումներով՝ երկրի Սահմանադրությանը և 1923 թ. Լոզանի պայմանագրի դրույթներին չհակասելու նպատակով:

Ստորև ներկայացվում են փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական նորմերը, որոնք կարգավորում են փոքրամասնություններին հստակ կարգավիճակի տրամադրման և խտրականությունից պաշտպանելու հիմքերը:

3.1. Միավորված ազգերի կազմակերպություն

ՄԱԿ-ի[25] համակարգի առանձնահատկություններից է, որ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդրի դիտարկումը մարդու համընդհանուր իրավունքների համակարգում հանգեցվում է միջազգային անվտանգության ու խաղաղության ապահովմանը՝ հաշվի

[24] 1989 թ. Բնիկ և ցեղային ժողովուրդների մասին Կոնվենցիան, ՄԱԿ-ի 1992 թ. Ազգային կամ էթնիկ, կրոնական և լեզվային փոքրամասնությունների պատկանող անձանց իրավունքների մասին, 1992 թ. ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գծով Բարձր հանձնակատարի մասին Հելսինկիի որոշումը, ԵԽ-ի 1995թ.՝ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիան:

[25] Թուրքիան ՄԱԿ-ի անդամ պետություն է 1945 թվականի հոկտեմբերի 24-ից:

առնելով ժողովուրդների և փոքրամասնությունների իրավունքների տնտեսական ոտնահարման, նրանց հանդեպ ծրագրված խտրականության արդյունքում լարվածության առաջացման, միջպետական հակամարտության վերաճելու ներկա միտումները:

Մարդու իրավունքների պաշտպանության հիմնական գործառույթը ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեային ու ՄԱԿ-ի մի շարք մասնագիտացված հաստատություններին է /ՅՈՒՆԵՍԿՕ և այլն/:

ՄԱԿ-ի շրջանակներում ընդունված և ստորև նշված Հռչակագրերն ու Կոնվենցիաները, որոնցում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մոտեցումն առավելապես ընդհանուր բնույթի է, սահմանում են խտրականությունն արգելող միասնական նորմ՝ առանց այդ իրավունքների ու պետության կողմից դրանց իրականացումը երաշխավորելու հստակ մեխանիզմների բնորոշման.

- ՄԱԿ-ի 1945 թ. Կանոնադրություն[26]

Հոդված 1-ին. ՄԱԿ-ի նպատակներն են. 2.3 Համագործակցել՝ միջազգային ասպարեզում միջազգային հիմնախնդիրները կարգավորելու նպատակով.... հումանիտար բնույթի հիմնախնդիրները կարգավորել ու ապահովել մարդու իրավունքների պաշտպանություն՝ առանց ռասայական, սեռային, լեզվային և կրոնական խտրականության:

Հոդված 55. ...ՄԱԿ-ը նպաստում է. մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր ճանաչմանը և հարգմանը՝ առանց ռասայական, սեռային, լեզվականն և կրոնական խտրականության:

-Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին՝ 1966թ. միջազգային դաշնագիր[27]

Հոդված 13. բոլորի համար կրթություն ստանալու իրավունքի երաշխավորում:

-Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին՝ 1966թ. միջազգային դաշնագիր[28]

[26] Թուրքիան ՄԱԿ-ի անդամ է, հետևաբար Կանոնադրությունը իրավաբանորեն պարտավորեցնող ուժ ունի վերջինիս համար:

[27] Թուրքիան վավերացրել է Դաշնագիրը 23.12.2003թ. հատուկ վերապահմամբ՝ փոքրամասնությունների առնչությամբ:

[28] Թուրքիան Դաշնագիրը ստորագրել է 2000թ. օգոստոսի 15-ին և վավերացրել է 2003թ. սեպտեմբերի 23-ին:

Հոդված 2. բոլոր անդամ պետությունների՝ դաշնագրում նշված բոլոր իրավունքների անվերապահ երաշխավորումն ապահովելու պարտավորությունը:

Հոդված 18. կրոնը ազատ ընտրելու և դավանելու իրավունքը:

Հոդված 20. ազգային, ռասայական կամ կրոնական ատելություն սերմանող ցանկացած ուղերձի արգելում:

Հոդված 24. Երեխաների հանդեպ լեզվական, կրոնական կամ ծննդյան գործոններից բխող խտրականության արգելում ու պաշտպանության ապահովում:

- Զարգացման իրավունքի մասին՝ 1986թ. հռչակագիր

Հոդված 1. Անհատի զարգացման իրավունքը՝ իրավունքների և ազատությունների ամբողջ համակարգի կենսագործմամբ:

Հոդված 3. Պետությունների հատուկ պատասխանատվությունը՝ իրավունքների և ազատությունների կենսագործման համար նորմալ պայմանների ստեղծման համար:

Հոդված 5. Պետությունների պարտավորությունը՝ միջոցներ ձեռնարկելու ժողովրդի և անհատների իրավունքների ու ազատությունների կոպիտ ու զանգվածային ոտնահարումները մերժելու ուղղությամբ:

Հոդված 8. Պետությունների պարտավորությունը՝ ձեռնարկելու բոլոր թույլատրելի միջոցները հիմնական ռեսուրսներում ու կրթական համակարգում յուրաքանչյուրի համար զարգացման իրավունքի կատարյալ իրագործման և համարժեք հնարավորություններ ապահովելու համար:

- Ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական փոքրամասնությունների իրավունքների մասին՝ 1992թ. հռչակագիր

Հռչակագրի ողջ տեքստը:

-Որոշ անհատների, հասարակական խմբերի և հասարակության անդամների պարտավորությունները՝ հիմնարար իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը խրախուսելու հարցում՝ 1998թ. հռչակագիր

Հոդված 2. Յուրաքանչյուր պետության պատասխանատվությունն ու պարտավորությունը՝ պաշտպանել, խրախուսել և իրագործել բոլոր հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

- Կրոնական խտրականության բոլոր ձևերի մերժման մասին՝ 1965թ. հռչակագիր

Հռչակագրի ողջ տեքստը:

-Մարդու իրավունքների զարգացման և ռասայական խտրականության, ապարտեիդի և պատերազմի հրահրման դեմ պայքարում խաղաղության ու միջազգային համագործակցության գործում զանգվածային լրատվամիջոցների ներդրումների հիմնական սկզբունքների մասին՝ 1978թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակագիր

Հոդված 2. Բնակչության տեղեկատվության ստացումը պետք է երաշխավորվի դրա աղբյուրի և տեղեկատվության բազմազանությամբ:

- Ռասայական խտրականության բոլոր ձևերը մերժելու մասին՝ 1965թ. կոնվենցիա[29]

Հոդված 1. Սույն Կոնվենցիայում՝ ռասայական խտրականություն՝ հասկացությունը նշանակում է ռասայի, մաշկիգույնի, ցեղային, ազգային կամ էթնիկական ծագման հատկանիշների հիմքով ցանկացած տարբերակում, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք ունեն քաղաքական, տնտեսական,սոցիալական, մշակութային կամ հասարակական կյանքի ցանկացած այլ բնագավառում մարդուիրավունքներն ու հիմնարար ազատությունները չեղյալ հայտարարելու կամ դրանց ճանաչումը, օգտագործումը կամ իրականացումը նվազեցնելու նպատակ կամ հանգեցնում են նման հետեւանքների:

- Զբաղվածության կամ աշխատանքի ոլորտում խտրականության մասին՝ 1958թ. կոնվենցիա[30]

Հոդված 1. Կոնվենցիայի նպատակների համար՝ խտրականություն՝ տերմինը ներառում է՝ խտրականության, արգելման կամ նախապատվության յուրաքանչյուր դրսևորում, ինչն արվում է կրոնական հիմքի վրա և հանգեցնում է հնարավորությունների հավասարության կասեցմանը կամ վերացմանը կամ անդրադառնում է զբաղվածության կամ աշխատանքի վրա:

[29] Թուրքիան Կոնվենցիան ստորագրել է 1972 թ. հոկտեմբերի 13-ին և վավերացրել է 2002 թ. հոկտեմբերի 16-ին: Սակայն Թուրքիան չի ճանաչել Խտրականության դեմ պայքարի կոմիտեի անհատական դիմումներն ընդունելու իրավասությունը:

[30] Թուրքիան վավերացրել է 19.07.67թ.:

- Կրթության բնագավառում խտրականության կանխման մասին՝ 1960 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիա[31]

Հոդված 5. Ազգային փոքրամասնությունները իրավունք ունեն կազմակերպելու իրենց կրթական գործը՝ ներառյալ դպրոցների կառավարումը կամ իրենց ազգային լեզուն օգտագործելու կամ կիրառելու իրավունքը:

- Երեխայի իրավունքների մասին՝ 1989թ. կոնվենցիա[32]

Հոդված 30. Այն երկրներում, որտեղ կան ազգային փոքրամասնություններ, այդ խմբերին պատկանող երեխաները, այլոց հետ մեկտեղ, չեն կարող զրկվել իրենց ազգային լեզուն օգտագործելու, մշակույթը և կրոնը պահպանելու, ավանդույթներին հետևելու իրավունքներից:

-Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի արգելման մասին՝ 1979թ. կոնվենցիա[33]

Արգելում է սեռային պատկանելության վրա հիմնված խտրականությունը կրթության բնագավառում:

- Սոցիալական առաջընթացի և զարգացման մասին՝ 1969թ. հռչակագիր

Հոդված 1. Բոլոր ժողովուրդները և բոլոր ազգերը, անկախ իրենց ազգային ծագումից, նորմալ պայմաններում և ազատություն մեջ ապրելու ու սոցիալական առաջընթացի օգտագործման և դրա զարգացման մեջ ավանդ ներդնելու իրավունք ունեն:

-Զբաղվածության ոլորտում քաղաքականության մասին[34] 1964թ. և Զբաղվածության ոլորտում համագործակցության և գործազրկությունից պաշտպանության մասին[35] 1988թ. կոնվենցիաներ

Զբաղվածության ոլորտում խտրականության բոլոր ձևերի արգելում:

-1949թ. Ժնևի Չորրորդ կոնվենցիա[36]

33-րդ և 53-րդ հոդվածներ. ունեցվածքի պաշտպանություն և ունեցվածքից չզրկելու իրավունքի երաշխավորում:

- Մարդու իրավունքների համընդհանուր 1948թ. հռչակագիր[37]

[31] Թուրքիան չի անդամակցում սույն փաստաթղթին:

[32] Թուրքիան վավերացրել է այն 04.04.95թ.՝ փոքրամասնությունների վերաբերյալ հատուկ վերապահմամբ:

[33] Թուրքիան վավերացրել է կոնվենցիան 20.12.85թ., իսկ դրա լրացուցիչ արձանագրությունը՝ 29.10.02թ., որով ճանաչվում է Կանանց հանդեպ խտրականության դեմ կոմիտեի առջև անհատական բողոքների ներկայացման իրավունքը:

[34] Թուրքիան վավերացրել է այն 13.12.77թ.:

[35] Թուրքիան չի անդամակցում սույն փաստաթղթին:

[36] Թուրքիան ստորագրել է այն 12.08.49թ. և վավերացրել 10.02.54թ.:

Հոդված 17. Սեփականության իրավունքի երաշխավորում:

ՄԱԿ-ի համակարգում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության համար կարող են կիրառվել՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին՝ 1966 թ. միջազգային դաշնագրի համաձայն՝ փորձագետներից բաղկացած Մարդու իրավունքների կոմիտեն և ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի ներքո գործող, խտրականության բոլոր ձևերի վերացման մասին առաջարկներ ու զեկույցներ ներկայացնող, Մարդու իրավունքների պաշտպանության և աջակցության հարցերով ենթահանձնաժողովի մեխանիզմները, ինչպես նաև՝ Ռասայական խտրականության բոլոր ձևերը մերժելու մասին՝ ՄԱԿ-ի 1965 թ. կոնվենցիայում նշված իրավունքների իրականացումը վերահսկող կոմիտեի մեխանիզմները:

Թուրքիայի հայերի մեկուսացման հաղթահարման հարցում առավելապես կարևորվում է՝ Ազգային, էթնիկ, կրոնական և լեզվային փոքրամասնությունների իրավունքների մասին՝ 1992թ. հռչակագիրը, մասնավորապես դրա 2-րդ հոդվածը, համաձայն որի՝ փոքրամասնությունների պատկանող յուրաքանչյուր անձ, առանց խտրականության, իրավունք ունի հաստատել ու պահպանել ազատ ու խաղաղ կապեր իր խմբի կամ այլ փոքրամասնությունների պատկանող խմբերի ու անձանց, ինչպես նաև այլ պետությունների քաղաքացիների հետ, որոնց հետ նրանք ունեն ազգային, էթնիկ, կրոնական և լեզվական կապվածություն: Սույն հռչակագրի նորմերի կենսագործմանն է ուղղված Մարդու իրավունքների խորհրդի 2007 թ. սեպտեմբերի 28-ի 6/15 բանաձևի համաձայն գործող Փոքրամասնությունների հարցերով ֆորումը, ինչը անկախ փորձագետների, պետությունների և ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչների քննարկումների արդյունքում թեմատիկ առաջարկներ է ներկայացնում Խորհրդին:

[37] Սույն հռչակագիրը հանդիսանում է միջազգային սովորութային իրավունքի մաս, և դրա դրույթները պարտադիր են բոլոր պետությունների, ներառյալ՝ Թուրքիայի համար:

3.2. ԵԱՀԿ

ԵԱՀԿ-ի շրջանակում մարդու իրավունքների պաշտպանության ապահովումն իրականացվում է գործող հստակ մարմինների կամ փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդիրներով պատասխանատու անձերի միջոցով (Մարդու իրավունքների և ժողովրդավարական հաստատությունների Վարշավյան գրասենյակը, ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների գծով Բարձրագույն հանձնակատարի ինստիտուտը):

ԵԱՀԿ-ի նորմերի կիրառման համար պետք է հաշվի առնել այդ նորմերի քաղաքական բնույթն ու իրավաբանորեն չպարտավորեցնող լինելը, կոնսենսուսի հիման վրա ընդունումը, երկակի ստանդարտների ու մոտեցումների ԵԱՀԿ-ի պրակտիկան: Արդյունքում նվազում է ԵԱՀԿ-ի կողմից ճգնաժամային իրավիճակներում արագ ու արդյունավետ հակազդելու կարողությունը, ինչը խիստ շահեկան է փոքրամասնությունների իրավունքների պատշաճ պաշտպանությունը չապահովող երկրների, ներառյալ՝ Թուրքիայի համար:

Մարդու իրավունքների պաշտպանության ԵԱՀԿ-ի ինստիտուտների առջև անհրաժեշտ է դնել Թուրքիայի գործող օրենսդրությունը փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության խնդրին առնչվող ԵԱՀԿ-ի բազմաթիվ փաստաթղթերի դրույթների հետ համապատասխանեցնելու պահանջը (1991թ. Կոպենհագենի փաստաթուղթ, Սոցիալ-քաղաքական կյանքում ազգային փոքրամասնությունների արդյունավետ մասնակցության մասին Լունի 1999 թ. առաջարկներ և այլն):

ԵԱՀԿ շրջանակում ընդունված համապատասխան փաստաթղթերն են.

-ԵԱՀԿ 1975թ. Եզրափակիչ ակտ

Սկզբունք 7. Հիմնարար իրավունքների և ազատությունների հարգում. Անդամ պետությունները, որոնց տարածքում բնակվում են ազգային փոքրամասնություններ, պետք է հարգեն վերջիններիս իրավունքներն ու ազատությունները, վերջիններիս տրամադրեն իրենց իրավունքներն ու ազատությունները օգտագործելու իրավունք և պաշտպանեն նրանց շահերն այդ ոլորտում:

- Վիեննայի հանդիպման փաստաթուղթ, 1986թ.,
- Նոր Եվրոպայի Փարիզյան խարտիա, 1990թ.,
- Մարդկային զարգացման Մոսկովյան փաստաթուղթ, 1991թ.,

- Հելսինկիի բարձրաստիճան հանդիպման փաստաթուղթ, 1992թ.,

- Բուդապեշտի գագաթաժողովի որոշում, 1994թ.,

- Լիսաբոնի գագաթաժողովի հռչակագիր, 1996թ.,

-Հաագայի հանձնարարականներ ազգային փոքրամասնությունների կրթական իրավունքների մասին, 1993թ.

- Եվրոպական պաշտպանության փաստաթուղթ, 1999թ.:

3.3. Եվրոպայի խորհուրդ

Եվրոպայի խորհրդին անդամակցումն ինքնին պետությունների համար իրավաբանական պարտավորություն է նախատեսում՝ մասնավորապես ԵԽ-ի մարդու իրավունքների ոլորտին առնչվող փաստաթղթերի ստորագրման և ներպետական ընթացակարգերի կատարման արդյունքում դրանց վավերացման միջոցով[38]:

1950 թ. ի վեր Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայով և դրա լրացուցիչ Արձանագրություններով կարևոր ընթացակարգեր ու մեխանիզմներ են հաստատվել մարդու իրավունքների պաշտպանության և այդ իրավունքների շարունակական կիրառման համար: Այդ փաստաթղթերի բոլոր անդամ պետությունները իրավաբանորեն պարտավորված են կիրառել Կոնվենցիայի դրույթները և կատարել դրանով ստեղծված մարմինների որոշումները: Այդ կառույցների լեգիտիմության վառ ցուցանիշներն են դրանց կողմից ընդունած որոշումների կիրառման բարձր ցուցանիշները:

Անհրաժեշտ է կիրառել մարդու իրավուքների ոտնահարման գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարան դիմելու հնարավորությունը: Դատարան դիմելու հիմք են հանդիսանում՝Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին՝ 1950 թ. կոնվենցիան և դրան կից արձանագրությունները[39]: Թուրքիայում հայերի սեփականության տնօրինման և սեփականությունից օգտվելու իրավունքների վերականգնման հարցերով Եվրոպական դատարանը կարող է հիմք ընդունել իր իսկ դատական նախադեպերը, մասնավորապես Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի (1995-1998)[40], Քսենիդիս-Արեստիսն ընդդեմ Թուրքիայի (2005-2006)[41], Կիմիսիս Թեոդուկու Հունական ուղղափառ եկեղեցու սեփականության գրանցման (03.03.2009թ.)[42] գործերով կայացրած որոշումները:

ԵԽ-ի շրջանակում ընդունված համապատասխան փաստաթղթերն են.

- Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին՝ 1950թ. Եվրոպական կոնվենցիա

Հոդված 5. Կեղծ կալանում և Ազատազրկում:

Հոդված 8. Ընտանիքի, տան և անձնական կյանքի հարգանք՝ ինչպես նաև 9-րդ և 14-րդ հոդվածներ:

-1950 թ. Եվրոպական կոնվենցիայի թիվ 1 արձանագրություն, 1952թ.

Հոդված 1. ունեցվածքի պաշտպանություն և ունեցվածքից չզրկելու իրավունք,

Հոդված 2. կրթության իրավունք:

Հոդված 3. ընտրելու իրավունք:

- 1950 թ. Եվրոպական կոնվենցիայի թիվ 12 արձանագրություն, 2000թ.

---

[38] Խոսքը մասնավորապես վերաբերում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին 1950թ. և Ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին՝ 1995թ. կոնվենցիաներին (կոնվենցիային Թուրքիայի կողմից չմիանալը վերջինիս չի ազատում դրանում նշված ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության երաշխավորման պարտավորությունից): 2007թ. հունվարի դրությամբ Թուրքիան անդամակցում է շուրջ ԵԽ-ի 96կոնվենցիաների:

[39] Կոնվենցիան և դրա Առաջին արձանագրությունը ուժի մեջ է մտել Թուրքիայի համար 1954 թ. մայիսի 18-ից՝ փոքրամասնությունների առնչվող հատուկ վերապահումով: Կոնվենցիայի Երկրորդ և Երրորդ արձանագրությունները ուժի մեջ են մտել Թուրքիայի համար 1970 թվականի սեպտեմբերի 21-ից:

Կոնվենցիայի Չորրորդ արձանագրությունը Թուրքիան ստորագրել է միայն 19.10.1992 թ.: Թուրքիայի համար Կոնվենցիայի 5-րդ արձանագրությունն ուժի մեջ է մտել 20.12.1971թ., իսկ 6-րդ արձանագրությունը՝ 01.02.2003թվից: 7-րդ արձանագրությունը Թուրքիան ստորագրել է 14.03.1985թ., իսկ 9-րդը՝ 06.11.1990թ.: 8-րդ արձանագրությունն ուժի մեջ է Թուրքիայի համար 1/1/1990թ.-ից: Թուրքիան չի միացել կոնվենցիայի 10-րդ արձանագրությանը: 11-րդ արձանագրությունը Թուրքիայի համար ուժի մեջ է 01.11.1998թ.թվից: 12-րդ արձանագրությունը Թուրքիան ստորագրել է 18.04.2001թ., իսկ 13-ը ուժի մեջ է մտել 01.06.2006թ.: Թուրքիան կոնվենցիայի 14-րդ արձանագրությունը վավերացրել է 02.10.2006թ.:

[40] Լուիզիդուն ընդդեմ Թուրքիայի գործով Մարդու իրավունքների դատարանը ճանաչեց Լուիզիդուի իրավունքն իր սեփականության նկատմամբ, սահմանեց, որ Թուրքիան խախտել է Եվրոպական կոնվենցիայի Առաջին արձանագրության 1-ին հոդվածը և սեփականությունը տնօրինելու իրավունքից զրկելու դիմաց վճռեց 1,5 մլն. դոլարի փոխհատուցում:

[41] Քսենիդիս-Արեստիսն ընդդեմ Թուրքիայի գործով Մարդու իրավունքների դատարանը, հիմք ընդունելով Լուիզիդուի գործի նախադեպը, սահմանեց 1,1 մլն. դոլարի փոխհատուցում՝ սեփականությունը տնօրինելու և դրանից օգտվելու իրավունքից զրկելու դիմաց: Դատարանը որոշեց, որ Թուրքիան խախտել է Կոնվենցիայի 8-րդ հոդվածը (հարգանք տան հանդեպ), Առաջին արձանագրության հոդված 1-ը (սեփականության պաշտպանություն), Կոնվենցիայի 14-րդ հոդվածը (էթնիկ խտրականություն):

[42] Եվրոպական դատարանը վճռեց, որ Թուրքիան խախտել է հունական ուղղափառ հիմնարկի սեփականության իրավունքը՝ բռնագրավելով վերջինիս պատկանող հողատարածքը, ինչի համար Թուրքիայի կառավարությունը պետք է վճարի 105.000 եվրո՝ վնասների դիմաց:
p://www.reuters.com/article/worldNews/idUSTRE5224XF20090303?feedType=RSS&feedName=worldNews

Հոդված 1. խտրականության արգելում:

- Ազգային փոքրամասնությունների իրավունքների մասին 1955թ. կոնվենցիա[43]

Կոնվենցիայի ողջ տեքստը:

- 1992թ. Տարածաշրջանային լեզուների և փոքրամասնությունների լեզուների մասին Եվրոպական խարտիա[44]

Խարտիայի ողջ տեքստը:

- Եվրոպական սոցիալական խարտիա 1996թ.[45]

5-րդ մաս, հոդված E. խտրականության արգելում:

3.4. Եվրոպական միություն

- ԵՄ-ի Կանոնադրություն

Հոդված 14. կրթության իրավունքի երաշխավորում:

- ԵՄ-ի Հիմնարար ազատությունների մասին Խարտիա

Հոդված 17. սեփականության իրավունքի երաշխավորում:

-Լիսաբոնյան պայմանագիր[46]

Հոդված 2/3. մշակութային և լեզվական բազմազանությունը հարգելու պետությունների պատասխանատվության ճանաչում:

-Կոպենհագենյան չափանիշներ, 1993թ.

Անդամ պետությունների կողմից փոքրամասնությունների իրավունքների պաշտպանություն:

- Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցումից բխող պարտավորությունների կատարման մեխանիզմներ

[43] Թուրքիան չի անդամակցում:

[44] Թուրքիան չի անդամակցում սույն փաստաթղթին:

[45] Փաստաթուղթը Թուրքիայի համար ուժի մեջ է 24.12.1989 թվից:

[46] Պայմանագիրը դեռևս ուժի մեջ չի մտել:

Այս գործընթացի շրջանակում ԵՄ-ի կառույցների կողմից ներկայացվող զեկույցներում[47] ներառվում են Թուրքիայում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործման առաջարկները: Աշխատանքներ կարող են տարվել այդ առաջարկներում շեշտադրում կատարելու Թուրքիայում փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության երաշխավորման համար առաջնային նշանակություն ունեցող, խտրականությունն արգելող, օրենքների ընդունումն ու դրանց կիրարկումն ապահովող գործուն իրավական համակարգի ապահովմանը. խտրականության դեպքերի բացահայտման, խտրականության դադարեցման, տուժողներին փոխհատուցման տրամադրման, քրեորեն պատժելի գործողությունների համար՝ կազմակերպիչների բացահայտման և պատժման, իսկ պատմական հանցագործությունների պարագայում՝ տուժած համայնքին արդար ֆինանսական փոխհատուցումների համակարգի գործարկման առումով:

[47] European "Progress Report" on Turkey, published by the European Commission on 13 November (2001); 2003 Regular Report on Turkey's Progress towards Membership; 2004 Regular Report on Turkey's Progress towards Membership
/http://ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/2004/rr_tr_2004_en.pdf/;
Turkey 2005 Progress Report /2005/; EC: Council Decisions of 2001, 2003, 2006 and 2008 on the principles, priorities and conditions contained in the Accession Partnership with the Republic of Turkey /ec.europa.eu/enlargement/archives/pdf/key_documents/.

4. ԷԹՆԻԿ ԶՏՈՒՄՆԵՐԻ ԹՈՒՐՔԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄ

Ողջ պատմության ընթացքում հայերի նկատմամբ շարունակաբար կիրառած Թուրքիայի էթնիկ զտումների քաղաքականությունը խախտում է ժամանակակից միջազգային իրավունքի նորմերը: Ազգային զտումները խստագույնս դատապարվել են Տոկիոյի և Նյուրնբերգյան դատավարությունների ընթացքում և 1995 թ. ՄԱԿ-ի կողմից սերբական ղեկավարներին առաջադրված մեղադրանքներում: Էթնիկ զտումների ենթարկված հարյուր հազարավոր հայեր հետագայում զրկվել են նաև իրենց բնակության վայրերը վերադառնալու և իրենց սեփականությունը տնօրինելու իրավունքից: Բնակչության բռնի տեղահանումների պրակտիկան ոտնահարում է միջազգայնորեն ճանաչում ունեցող ու միջազգային բազմաթիվ փաստաթղթերով[48] երաշխավորվող՝ մարդու տարրական իրավունքները (կանքի, ազատության, սեփականության, ընտանեկան կյանքի և այլն), որոնք՝ մասնավորի վերահաստատվել են Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի որոշումներով:

Բազում միջազգային փաստաթղթեր[49] բռնի տեղահանումն արգելում են իբրև ռասայական, կրոնական կամ այլ խտրականություն, մասնավորապես 1965 թ. Ռասայական խտրականության բոլոր ձևերն արգելող կոնվենցիան (հոդված 1) և դրա կիրակումն ապահովող Ռասայական խտրականության կոմիտեն, որը քննության է առնում անդամ պետությունների զեկույցները, անհատական դիմումները և առաջարկներ է ներկայացնում[50]: Կոմիտեն 1995 թ. օգոստոսի 17-ի Բոսնիայում և Հերցեգովինայում իրավիճակի մասին իր որոշման մեջ հայտարարել է, որ բնիկների կամքին հակառակ ցանկացած նպատակով տարածքի ժողովրդագրական կազմը

[48] 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը (հոդվածներ 3,5,9,12,15), 1966 թ. Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (հոդվածներ 6,7,9,12,17), 1950 թ. Մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական կոնվենցիան (հոդվածներ 2,3,5,8) և դրա արձանագրությունները (Առաջին արձանագրություն, հոդված 1, Չորրորդ արձանագրություն, հոդվածներ 2,3,4):

[49] 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր Հռչակագիրը (հոդվածներ 1,2,7), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (հոդվածներ 2 և 26):

[50] Թուրքիան այն ստորագրել է 1972 թ. հոկտեմբերի 13-ին և վավերացրել 2002 թ. սեպտեմբերի 12-ին:

փոփոխելու յուրաքանչյուր փորձ խախտում է միջազգային իրավունքը (Decision 2 (47) of 17 August 1995): Զանգվածային տեղահանումներն արգելվում են նաև մարդկության հանդեպ գործած հանցագործությունների շրջանակում՝ մասնավորապես ՄԱԿ-ի կողմից[51], և ընկնում են Միջազգային քրեական դատարանի իրավասության ներքո[52]: Բացի այդ՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի բազմաթիվ բանաձևեր վերահաստատում են փախստականների ու տեղահանված անձանց ապահով կերպով իրենց բնակության վայրերը վերադառնալու իրավունքը[53]:

Անհրաժեշտ է առավել համակարգված ձևով հետամուտ լինել Թուրքիայի էթնիկ զտումների քաղաքականության զոհերի ու նրանց ժառանգների կողմից դատական ճանապարհով դրամական, բարոյական ու, հնարավորության դեպքում, նաև սեփականության փոխհատուցումներ ստանալու նպատակով ապահովագրական ընկերությունների ու բանկերի դեմ հայցերի ներկայացման ու դատական որոշումների ընդունման գործընթացին առավել լայն թափ հաղորդելուն (օր՝. Նյու Յորք Լայֆ Ինշուրանսը՝ ԱՄՆ-ում, Աքսան՝ Ֆրանսիայում), ինչը հնարավոր է միջազգային ասպարեզում հիշյալ խմբի շահերը ներկայացնող համապատասխան ներկայացուցչական մարմնի կամ կառույցի սետեղծման միջոցով:

Հայերի նկատմամբ Թուրքիայի վարած էթնիկ զտումների քաղաքականության վառ ապացույցն է նաև Թուրքիայի տարածքում հայության պատմական ու մշակութային ժառանգության ոչնչացումը: Տարբերույթ դիտարկումները ցույց են տվել, որ հայկական հուշարձանների ոչնչացման թուրքական քաղաքականությունը իրագործվել հետևյալ հիմնական մեթոդներով.

- հայկական հուշարձանները մատնվել են անուշադրության, ինչի արդյունքում ավերվել են ժամանակի ընթացքում,
- հայկական հուշարձաններն իբրև սեփականություն հանձնվել են տեղի քրդերին կամ թուրքերին, որոնք դրանք տնօրինել են ըստ իրենց հայեցողության,
- պետական անհրաժեշտությունից ելնելով՝ այդ հուշարձանները քանդվել են,
- հուշարձանները իսլամացվել են:

[51] Տե՛ս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 771 (1992), 780 (1992), 808 (1993) , 820 (1993) , 941(1994), և ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 46/242 և 47/80 բանաձևերը:

[52] Տե՛ս Միջազգային Քրեական դատարանի 1998թ. Հռոմի Կանոնադրության 7-րդ հոդվածը:

[53] Տե՛ս ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1199 (1998), 1203 (1998) և 1239 (1999) բանաձևերը:

Ընդ որում՝ դրանով Թուրքիան խախտել է 1982 թ.իր իսկ ընդունած Սահմանադրության 63-րդ հոդվածը, որը սահմանում է պետության պատասխանատվությունը պատմական, մշակութային և բնական ժառանգության պաշտպանության և այդ ուղղությամբ ձեռնարկվելիք միջոցների ապահովման մասով: Պոլսո Հայոց Պատրիարքարանի՝ հայկական հուշարձանների պահպանության ջանքերը շոշափելի արդյունքներ չեն տվել: Ուշագրավ է, որ վերջին շրջանում հայկական հուշարձանների ու գերեզմանատների պահպանության խնդիրներով ակտիվ աշխատանքներ են կատարում Թուրքիայի ծպտյալ հայերը, ինչպես, օրինակ, Սասունում Ազիզ Դաղջնի ստեղծած հասարակական կազմակերպությունը, որի ջանքերի շնորհիվ Թուրքիայի հուշարձանների պահպանության հանձնաժողովը Սասունի Մարութա սարի Սուրբ Աստվածածին եկեղեցին ընդգրկել է պետության պաշտպանության ներքո գտնվող հուշարձանների ցուցակում[54]:

Հայկական մշակութային ժառանգության ոչնչացման Թուրքիայի քաղաքականությունը խախտում է մշակութային արժեքների պաշտպանությունը երաշխավորող միջազգային իրավունքի հիմնարար նորմերը, մասնավորապես պետությունների՝ իրենց տարածքում գտնվող պատմամշակութային ժառանգությունը ճանաչելու/ընդունելու, պաշտպանելու և ապագա սերունդներին փոխանցելու պարտականությունը՝ պատերազմի ու խաղաղության պայմաններում: Մշակութային ժառանգության պաշտպանությունը նախատեսում է դրա նկատմամբ հարգանքի և ապահովության երաշխիքի տրամադրում, ինչը նախատեսվում է ստորև ներկայացվող միջազգային փաստաթղթերով.

- 1899[55] և 1907թթ. Հաագայի Կոնվենցիաներ, մասնավորապես 1907 թ. Հաագայի Չորրորդ կոնվենցիայի կանոնների 27 և 56 հոդվածները:
- Գեղարվեստական և գիտական հաստատությունների և պատմական հուշարձանների պաշտպանության մասին Ռոերիխի Դաշնագիր (1935 թ., ապրիլի 15):
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կանոնադրության առաջին հոդվածի երկրորդ մասի գ կետը, որով ՅՈՒՆԵՍԿՕ-ն հանձն է առնում սատարել, մեղմել, ավելացնել իրազեկությունը՝ երաշխավորելով աշխարհի գրքերի, արվեստի գործերի և պատմական ու գիտական հուշարձանների պաշտպանությունը և համապատասխան միջազգային կոնվենցիաների առաջադրումը:

[54] 'Ազոտ'թերթ, 09.05.2008թ.:
[55] Թուրքիան վավերացրել է 12.06.1907 թ.:

- Զինված հակամարտության ժամանակ մշակութային ժառանգության պաշտպպանության վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիա (Հաագայի 1954թ. մայիսի 14-ի կոնվենցիա[56]) և դրա երկու (1954 թ. մայիսի 14-ի[57] և 1999 թ. մարտի 26-ի[58] Արձանագրությունները և 1949 թ. Ժնևի Չորրորդ կոնվենցիայի առաջին[59] և երկրորդ[60] լրացուցիչ Արձանագրությունները:
- Եվրոպական մշակութային կոնվենցիա (1955թ. մայիսի 5[61]):
- Հնէաբանական պեղումների Միջազգային կիրառելի չափանիշների վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի առաջարկներ, Հասարակական և մասնավոր աշխատանքների արդյունքում վտանգված մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ առաջակներ (1968թ.), Ազգային մակարդակով մշակութային և բնական ժառանգության պաշտպանության վերաբերյալ առաջարկներ (1972թ.), Պատմական վայրերի անվտանգության կանոնների և դրանց ներկա դերի մասին առաջարկներ (1976թ.):
- Միջազգային մշակույթի համագործակցության չափանիշների մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակագիր (1966թ. նոյեմբերի 4):
- Մշակութային ժառանգության անօրինական ներկրման, արտահանման և տեղափոխման պաշտպանության և կանխման միջոցների վերաբերյալ Կոնվենցիա (1970 թ. նոյեմբերի 14[62]):
- Հնէաբանական ժառանգության պաշտպանության վերաբերյալ Եվրոպական Կոնվենցիա (1970 թ. նոյեմբերի 20, վերանայված առ 1992թ. հունվարի 16[63]):
- Աշխարհի մշակութային և բնական ժառանգության պաշտպանության վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիա (1972թ. նոյեմբերի 16[64]):
- 1976 թ. հունվարի 3-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին Միջազգային Դաշնագիր (հոդված 15[65]):
- Եվրոպայի ճարտարապետական ժառանգության պաշտպանության մասին 1985 թ. հոկտեմբեր 3-ի Կոնվենցիա[66]:

[56] Թուրքիան վավերացրել է 15.12.1965 թ.:
[57] Թուրքիան չի անդամակցում:
[58] Թուրքիան չի անդամակցում:
[59] Թուրքիան չի անդամակցում:
[60] Թուրքիան չի անդամակցում:
[61] Թուրքիան այն վավերացրել է 10.10.1957 թ.:
[62] Թուրքիան վավերացրել է 21.04.1981 թ.:
[63] Թուրքիան չի անդամակցում:
[64] Թուրքիան վավերացրել է 16.03.1983 թ.:
[65] Թուրքիան վավերացրել է 15.08.2000թ., ուժի մեջ է մտել 23.09.2003թ.:
[66] Թուրքիան վավերացրել է 11.10.1989թ., ուժի մեջ է մտել 1.02.1990թ.:

- Մշակութային հարստության հանդեպ իրականացված օրինախախտումների մասին Եվրոպական Կոնվենցիա (1985 թ. հունիսի 23[67]):
- Եվրոպայի լանդշավտի մասին Կոնվենցիա (2000 թ. հոկտեմբերի 20[68]):
- Մշակութային ժառանգության միտումնավոր ոչնչացման մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի Հռչակագիր (2003թթ. հոկտեմբերի 17):
- Մշակութային ժառանգության միտումնավոր ոչնչացմանն առնչվող Հռոմի միջազգային քրեական դատարանի կանոնադրության 8-րդ հոդվածը և նախկին Հարավսլավիայի միջազգային քրեական դատարանի կանոնադրության 3-րդ հոդվածը:
- Մշակութային արտահայտման բազմազանության պաշտպանության և խրախուսման վերաբերյալ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Կոնվենցիա (2005 թ. հոկտեմբերի 20[69]):
- Եվրոպայի խորհրդի՝ Մշակութային ժառանգության արժեքի վերաբերյալ Կոնվենցիա (2005 թ. հոկտեմբերի 27[70]):

Թուրքիայի վանդալիզմի քաղաքականությունը խախտել է նաև ՄԱԿ-ի բազմաթիվ բանաձևեր և Հռչակագրեր, մասնավորապես.

- ՄԱԿ-ի ԳԱ Մշակույթի և զարգացման մասին 41/187 (դեկտեմբերի 8, 1986թ.), 46/158 (դեկտեմբերի 19, 1991թ.), 51/179 (դեկտեմբերի 16, 1996թ.), 52/197 (դեկտեմբերի 18, 1997թ.), 53/184 (դեկտեմբեր 15, 1998թ.), 55/192 (դեկտեմբերի 20, 2000թ.), 57/249 (դեկտեմբեր 20, 2002թ.) բանաձևերը:
- ՄԱԿ-ի ԳԱ Քաղաքակրթությունների միջև երկխոսության տարվա մասին, 1998թ. նոյեմբերի 4-ի 53/22 բանաձև և 2001թ. նոյեմբերի 9-ի՝ Քաղաքակրթությունների միջև երկխոսության Համընդհանուր օրակարգ (56/6)՝ ներառյալ գործողությունների ծրագիրը:
- ՄԱԿ-ի Խաղաղության բանաձևերի /53/43 A և B/ մշակույթի մասին Հռչակագիր և Գործողությունների ծրագիր:
- ՄԱԿ-ի ԳԱ 55/254 բանաձև Կրոնական վայրերի պաշտպանության մասին (2001թ.,հունիսի 11):
- ՄԱԿ-ի ԳԱ 56/8 բանաձև՝ '2008 թվականը որպես ՄԱԿ-ի մշակութային ժառանգության տարի հռչակելու մասին' (դեկտեմբերի 4,2001թ.):

---

[67] Թուրքիան ստորագրել է 1985 թ. սեպտեմբերի 26-ին:
[68] Թուրքիան վավերացրել է 13.10.2003 թ., ուժի մեջ է մտել 1.03.2004 թ.:
[69] Թուրքիան չի անդամակցում:
[70] Թուրքիան չի անդամակցում: